ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-19/32-3-ԲՊ

ք. Երևան «____» _____ 2019թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ստեփան Մաչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բի Ափ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Միրոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4710000 (չորս միլիոն յոթ հարյուր տաս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[1]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[1] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք.Երևան, կառավարական տուն 3 ՀՎՀՀ՝ 01506515 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ՝ 900011216109 Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ս. Մաչյան	«Բի Ափ» ՍՊԸ Հասցե՝ ք.Երևան, Սարյան 24Բ, 58 ՀՎՀՀ՝ 02690413 «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 2050022509541001 Տնօրեն Դ. Միրոյան
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Digitally signed by MACHYAN STEPAN 2314870492
Date: 2019.12.16 18:15:33 GMT+04:00

Հավելված N 1
«_____» _____ 2019թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-19/32-3-ԲՊ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
3	92221100-5 Անիմացիոն սոցիալական հոլովակներ	Ներկայացվում է ստորև	դրամ	4710000	17	Հեռարձակում ՀՀ ողջ տարածքում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2019թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հեռուստատեսային ծառայությունների
I. Նախաբան

1.1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն են վերապահված գործառույթներ, որոնք ուղղակիորեն առնչվում են հանրության լայն հատվածների ու հետաքրքրությունների հետ: Մասնավորապես, նախարարությունը մի շարք ոլորտներում հանդես է գալիս որպես ծառայություն մատուցող և կարգավորող մարմին, և մտադիր է սույն տեխնիկական բնութագրով ներկայացված առաջադրանքով շարադրված միջոցառումներով նպաստել թե հանրային իրազեկման մակարդակի, թե ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացմանը:

1.2. Հանրային իրազեկմանն ուղղված քայլերի նպատակն է թափանցիկ ու տեսանելի դարձնել նախարարության գործունեությունը, բարձրացնել ծառայություններից օգտվելու քաղաքացիների տեղեկացվածության մակարդակը, հասանելի դարձնել սեփական իրավունքների մասին տեղեկատվությունն ու ծանոթացնել ստեղծված նոր հնարավորություններին:

1.3. Հաշվի առնելով վերոգրյալը՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում նախարարության կողմից իրականացվող ծրագրերն ու աշխատանքները, ինչպես նաև՝ հանրությանը մատուցվող ծառայությունները լայնորեն լուսաբանելու նպատակով որոշվել է հեռարձակել հեռուստառեպորտաժներ, ոլորտին առնչվող անիմացիոն և խաղարկային տեղեկատվական հոլովակներ, սոցիալական գովազդներ՝ Հայաստանի Հանրապետության տարածքի առնվազն 90 % ծածկույթ ապահովող հեռարձակողի ներգրավմամբ:

1.4. Մասնավորապես, սույն տեխնիկական բնութագրով ներկայացվող առաջադրանքի շրջանակներում ակնկալվում է ապահովել ստորև նշված թեմաների լուսաբանումը.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գործունեության ոլորտներ՝

1. Հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներ
2. Տարեցների հիմնահարցեր
3. Զբաղվածության ծրագրեր
4. Աշխատավարձի քաղաքականություն
5. Աշխատանքի պետական քաղաքականություն
6. Սոցիալական գործընկերություն
7. Աշխատանքային օրենսդրության կատարելագործում
8. Միջազգային համագործակցություն
9. Կանանց հիմնահարցեր
10. Երեխաների իրավունքների պաշտպանություն
11. Անօթևանների խնդիրներ
12. Սոցիալական աջակցություն
13. Պետական նպաստներ
14. Կենսաթոշակային բարեփոխումներ
15. Ժողովրդագրության ռազմավարություն
16. Բժշկասոցիալական փորձաքննություն
17. Երիտասարդների մասնագիտական կողմնորոշում
18. Սոցիալական բնակարանային ֆոնդ
19. Որդեգրման և խնամատար ընտանիքների քաջալերում
20. Եվ այլն:

II. Նպատակ

2.1 Սույն տեխնիկական բնութագրով պահանջվող առաջադրանքի հիմնական նպատակն է.

Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի քաղաքականության, պետական ծրագրերի, իրավական ակտերի լուսաբանումը, ինչը հնարավորություն կտա առավել ճանաչելի ու մատչելի դարձնել նախարարության կողմից մատուցվող ծառայությունները և քաղաքացիական իրավունքների իրագործման հնարավորությունները: Ընդլայնել պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությունն ու համակարգի վերաբերյալ իրազեկվածությունը, բարելավել պետական համակարգի գործունեության թափանցիկությունը:

III. Ծառայությունների ծավալը, աշխատանքի մեթոդաբանությունը և տեխնիկական բնութագրով պահանջվող առաջադրանքի իրականացման եղանակներ

3.1. Ընտրված մասնակիցը պետք է հանդիպի շահառու պետական մարմնի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատուների և այլ իրավասու անձանց

հետ գնահատելու հանրությանը մատուցվող ծառայությունների ընթացիկ և նախատեսված գործողությունների վերաբերյալ տեղեկատվության տարածման առաջնահերթությունները: Սույն տեխնիկական բնութագրով պահանջվող առաջադրանքի կատարման նպատակով ընտրված մասնակցից պահանջվում է իրականացնել ստորև նշված արդյունքներին հասնելու համար համալիր գործողություններ և ստանալ ստորև հիշատակված արդյունքներ, որոնց հիմնական նպատակն է հանդիսանում հանրային իրազեկվածության բարձրացումը նախարարության գործունեության վերաբերյալ: Մասնավորապես, ստորև նշված արդյունքները ստանալու համար պետք է հաշվի առնել պատվիրատուի կողմից ըստ ակնկալվող գործողությունների և արդյունքների սահմանված հետևյալ պահանջները.

3.1.1 Աշխատանքային ծրագրի և հեռուստատեսային ռեպորտաժների հեռարձակման ռազմավարության մշակում

Ընտրված մասնակիցը պետք է մշակի և պատվիրատուին ներկայացնի պատշաճ հանրային իրազեկման արշավ կազմակերպելու նպատակով «Աշխատանքային ծրագիր և ռազմավարություն» ամփոփ հաշվետվությունը, որը պետք է ներառի պայմանագրի կատարման ժամանակահատվածում և հանրային իրազեկման նպատակով սույն առաջադրանքում հիշատակված և իրականացվելիք բոլոր գործողությունների կատարման եղանակները և ռազմավարությունը, ինչպես նաև ընտրված մասնակցի կողմից ներկայացված գործնական առաջարկները:

3.1.2. Հեռուստատեսային կարճ տեսաֆիլմերի, տեղեկատվական և անիմացիոն սոցիալական հոլովակների պատրաստում

Ընտրված մասնակիցը ապահովում է ոլորտի քաղաքականության, այդ թվում իրականացվող բարեփոխումների, պետական ծրագրերի, իրավական ակտերի լուսաբանմանը, սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող լայնածավալ բարեփոխումներին ուղղված հեռուստատեսային կարճ տեսաֆիլմերի, տեղեկատվական և անիմացիոն սոցիալական հոլովակների պատրաստում:

<u>Չափաբաժին 3.</u>

Անիմացիոն սոցիալական հոլովակներ՝ 17 հատ: Անիմացիոն սոցիալական հոլովակները պետք է փոխանցեն այն արժեքներն ու գաղափարները, որոնք ընկած են պատվիրատուի աշխատանքի հիմքում, այն է՝ ներառականություն, հավասար հնարավորությունների ստեղծում, մարդու իրավունքների իրացում: Տևողությունը՝ 1 րոպե: Անիմացիոն լուծումները չեն կարող լինել պատրաստի ձևաչափերի գործածությամբ (template), այլ պատրաստված լինեն մասնակցի կողմից: Անիմացիոն սոցիալական հոլովակների թեմաները քննարկվում և հաստատվում են պատվիրատուի կողմից: ԺԵՍՏԵՐԻ ԼԵԶՎՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է:

IV. Արդյունքները և անհրաժեշտ նյութերի ներկայացման ժամանակացույցը

4.1. Ընդհանուր առմամբ, պատվիրատուն նախատեսել է հետևյալ ժամանակացույցը և ստորև նշված անհրաժեշտ նյութերի ներկայացումը սույն առաջադրանքի կատարման նպատակով:

4.1.1. «Աշխատանքային ծրագիր և ռազմավարություն» ամփոփ հաշվետվություն:

Ժամկետները՝ ենթակա է ներկայացման սույն տեխնիկական բնութագրով պահանջվող առաջադրանքը սկսելուց հետո տասնօրյա ժամկետում: Ներկայացման եղանակը՝ նշված հաշվետվությունը պետք է ներկայացվի հայերեն լեզվով, 1 օրինակ էլեկտրոնային տարբերակով, 1 օրինակ թղթային տարբերակով: Հաստատված սցենարում կարող են կատարվել փոփոխություններ՝ կողմերի համաձայնությամբ:

4.1.2. «Հեռուստառեպորտաժների և տեղեկատվական, սոցիալական հոլովակների պատրաստում»:

Ժամկետները՝ ենթակա է ներկայացման նկարահանումից հետո՝ հնգօրյա ժամկետում:

Ներկայացման եղանակը՝ տեսանյութերը պետք է ներկայացվեն HD կամ Full HD ձևաչափով՝ 4 օրինակ կրկնօրինակված DVD սկավառակի վրա՝ հայերեն:

4.1.3 «Վերջնական հաշվետվություն»

Ժամկետները՝ ենթակա է ներկայացման առաջադրանքով նախատեսված բոլոր գործողությունները ավարտելուց հետո մեկշաբաթյա ժամկետում: Ներկայացման եղանակը նշված նյութը պետք է ներկայացվի հայերեն լեզվով, 1 օրինակ էլեկտրոնային տարբերակով և 1 օրինակ թղթային տարբերակով:

V. Մասնակցի պարտականություններ

5.1. Ընտրված մասնակիցը պետք է պատասխանատու լինի պահանջվող արդյունքների աշխատանքային պլանի, նյութերի սցենարների մշակման, պատրաստման համար և դրանց ստեղծման ընթացքում սերտորեն համագործակցի պատվիրատուի հետ:

5.2. Ընտրված մասնակիցը պետք է հետևի հիմնական ուղղություններին, որոնք կտրվեն պատվիրատուի, աշխատանքային խմբի կամ նշանակված իրավասու անձի կողմից, ով կոորդինացնելու է սույն առաջադրանքի շրջանակներում նախատեսված աշխատանքները: Նշանակված աշխատանքային խումբը/կոորդիանատորը տրամադրելու է անհրաժեշտ ուղղություններ՝ աշխատանքը իրականացնելու համար մանրամասն մեթոդաբանության մշակման նպատակով:

5.3. Ընտրված մասնակիցը պետք է կոորդինացնի սույն տեխնիկական առաջադրանքով նախատեսված գործողությունները պատվիրատուի և նրա կողմից նշանակված խմբի, կամ անձանց հետ:

VI. Աշխատանքի կատարման և վճարման ժամանակացույց

6.1. Սույն առաջադրանքի կատարման համար նախատեսված ժամանակահատվածը ներառում է հիշատակված բոլոր փաստաթղթերի և նյութերի պատրաստումն ու ներկայացումը պատվիրատուին: Նախատեսվում է, որ ընտրված մասնակիցը պետք է նշանակի ծրագրի ղեկավար (որը պետք է օժտված լինի համապատասխան լիազորություններով)՝ պայմանագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: Պլանավորված է, որ այս առաջադրանքի իրականացումը նախատեսվում է ավարտել մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

Պատվիրատուի կողմից մատուցվող Ծառայությունը ընդունվում է և դրա դիմաց վճարվում է ըստ փաստացի մատուցված Ծառայության չափի (ամսական կտրվածքով):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
_____	_____
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Digitally signed by MIROYAN DAVIT 2004890606
Date: 2019.12.09 10:17:41 AMT

Հավելված N 2
«____» _____ 2019թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-19/32-3-ԲՊ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	92221100-5	Անիմացիոն սոցիալական հոլովակներ												4710000	4710000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » 2019թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-19/32-3-ԲՊ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2019թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-19/32-3-ԲՊ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն